2024, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (667)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Դեկտեմբերի 2-ին

Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պրոռեկտոր Քրիստիան Վինցեին, համալսարանի պատմության ինստիտուտի տնօրեն Շանդոր Ուզեին և հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչին՝ ուղեկցությամբ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի:

Հանդիպմանը տիար Հովհաննիսյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց հայկական մանկավարժական և հունգարական կաթոլիկ համալսարանների միջև առկա փոխգործակցության մասին՝ ի մասնավորի անդրադառնալով վերջինիս հայագիտության ամբիոնի բեղուն գործունեությանը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց հյուրերին՝ Հայաստանի կրթական հաստատությունների հետ սերտ գործակցության և Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում հայագիտական ուսումնասիրությունների խթանման ուղղությամբ տարվող աշխատանքների համար:

Իր հերթին պրոռեկտոր Քրիստիան Վինցեն Վեհափառ Հայրապետին ներկայացրեց համալսարանի գործունեության շրջանակները՝ շնորհակալություն հայտնելով այս երկու համալսարանների միջև խորացող համագործակցությանն աջակցելու համար: Պրոռեկտորը տեղեկացրեց նաև, որ առաջիկայում հայկական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետում բացվելու է հունգարագիտական կենտրոն:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետը անդրադարձ կատարեց Հայաստանում տիրող իրավիճակին, արտաքին մարտահրավերներին և Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ Ադրբեջանի դատապարտելի նկրտումներին: Նորին Սրբությունը նաև հիշեց 2021 թ. դեկտեմբերին Հունգարիայի իշխանությունների և Կաթոլիկ Եկեղեցու գործադրած միջնորդական ջանքերը, որոնց շնորհիվ հնարավոր եղավ հայրենիք վերադարձնել Ադրբեջանում պահվող հինգ ռազմագերիների:

Հանդիպմանը մտահոգություն արտահայտվեց Արցախի մշակութային-հոգևոր ժառանգության ոչնչացման և յուրացման դեպքերի կապակցությամբ, կարևորվեց միջազգային հանրության գործուն աջակցությունը Ադրբեջանի նմանօրինակ քաղաքականության կանխման և պատանդառված ռազմագերիների ազատ արձակման գործում:

Դեկտեմբերի 3-ին

Իտալիայի Բոլզանոյի քաղաքապետին և Եվրակ հետազոտական կենտրոնի գիտնականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Բոլզանո քաղաքի քաղաքապետ Ռենզո Կարամաչիին և Իտալիայի Եվրակ հետազոտական կենտրոնի գիտնականներին՝ ուղեկցությամբ Հայաստանի Եվրոպական համալսարանի ռեկտոր տիկին Հեղինե Բիշարյանի:

Հանդիպման սկզբում տիկին Բիշարյանը, ներկայացնելով հյուրերին, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց համալսարանի և Եվրակ հետազոտական կենտրոնի միջև ձևավորված սերտ գործակցության վերաբերյալ:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ ընդգծելով քրիստոնեության կարևոր դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում և հոգևոր, մշակութային ժառանգության կերտման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Եվրակ հետազոտական կենտրոնին և Եվրոպական համալսարանին՝ Հայաստանի կրթական ոլորտում ներդրվող ջանքերի համար:

Նորին Սրբությունը խոսեց նաև Հայոց Եկեղեցու և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջև առկա սերտ հարաբերությունների և գործակցության մասին:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետը մտահոգությամբ անդրադարձավ Հայաստանի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, ինչպես նաև Ադրբեջանի կողմից հնչող անթաքույց սպառնալիքներին ու պարտադրանքներին՝ կարևոր նկատելով միջազգային հանրության և բարեկամ երկրների զորակցությունը մեր ժողովրդին:

Իր հերթին Բոլզանոյի քաղաքապետ Ռենզո Կարամաչին հաղորդեց Հայաստանից ստացած իր տպավորությունները՝ նկատելով, որ հայոց սրբավայրերը հայ ժողովրդի զորավոր հավատքի վկայությունն են: Այս կապակցությամբ քաղաքապետը վստահություն հայտնեց, որ հայորդիները զորեղ հավատքի շնորհիվ կկարողանան հաղթահարել բոլոր դժվարություններն ու փորձությունները:

Դեկտեմբերի 4-ին

ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող՝ Իտալիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող՝ Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանի համար այս ծանր ու դժվարին ժամանակաշրջանում դեսպանի իրականացրած ծառայությանը՝ գնահատելով վերջինիս ջանքերը՝ ուղղված երկու բարեկամ երկրների միջև կապերի առավել ամրապնդմանը: Այս առնչությամբ Նորին Սրբությունը խոսեց նաև հայ և իտալացի ժողովուրդների ընդհանրությունների, ինչպես և Հայ Առաքելական ու Կաթոլիկ Եկեղեցիների սերտ գործակցության մասին:

➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող՝ Իտալիայի դեսպանին

➥ էջ 1

Իր հերթին դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց Հայաստանում պաշտոնավարման իր փորձառությունը և ջերմ տպավորությունները՝ ընդգծելով, որ այս ընթացքում առիթ է ունեցել լավագույնս ճանաչելու հայ ժողովրդին և հաղորդ դառնալու Հայաստանի պատմական ու հոգևոր արժեքներին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

Դեկտեմբերի 5-ին **ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Կլաուդիա Բուշին:

Նորին Սրբությունը, շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով, մաղթեց բարեհաջող առաքելություն՝ ի նպաստ երկու ժողովուրդների կապերի առավել զորացման:

Հայոց Հովվապետն իր գոհունակությունն արտահայտեց երկու երկրների միջև ձևավորված արդյունավոր փոխգործակցության համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև անդրադարձ կատարեց աշխարհաքաղաքական մտահոգիչ զարգացումներին և դրանց ազդեցությանը մեր տարածաշրջանում տիրող իրավիճակի վրա՝ աղոթելով, որ աշխարհում դադարեն հակամարտությունները, և տարբեր ազգեր չապրեն նույնպիսի ցավ ու տառապանք, ինչպիսին հայ ժողովուրդը կրեց Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպանը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ կանի առավելագույնը՝ երկու երկրների բարեկամությունն ու հարաբերություններն առավել ամրապնդելու ուղղությամբ:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև բռնի տեղահանված արցախահայերի սոցիալական խնդիրների հաղթահարմանն ուղղված Մայր Աթոռի ծրագրերին, ինչպես նաև միջեկեղեցական ոլորտում առկա սերտ գործակցությանը:

Դեկտեմբերի 9-ին **Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոյին:

Հանդիպմանը Լուիս Մորենո Օկամպոն Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց Ադրբեջանում կազմակերպված COP29 կլիմայական գլոբալ գագաթնաժողովի կապակցությամբ Արցախում իրագործված էթնիկ զտումների բարձրաձայնման, Ադրբեջանում պահվող հայ գերիների ազատ արձակման ուղղությամբ ծավալած գործունեության և արձանագրված արդյունքների մասին: Այս առնչությամբ Լուիս Օկամպոն կարևոր նկատեց Հայոց Հայրապետի կոչին ընդառաջ COP29-ի նախօրեին քրիստոնեական Եկեղեցիների և կառույցների աղոթակցությունը Հայ Եկեղեցուն՝ գերեվարվածների տունդարձի և Հայաստանին նվիրված ընդհանրական աղոթքի նախաձեռնության համար:

Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ տիար Օկամպոյի ներդրած ջանքերին՝ ի խնդիր արցախահայության իրավունքների պաշտպանության և Ադրբեջանի ցեղասպան գործողությունների իրազեկման՝ գործադրելով միջազգային իրավունքի ոլորտում իր փորձն ու հեղինակությունը: Այս կապակցությամբ Հայոց Հովվապետը հաստատեց, որ Հայոց Եկեղեցին ևս կարելի՝ ի գործ է դնում միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական հարթակներում Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքների բռնազավթման, հայրենազրկված արցախահայերի իրավունքների պաշտպանության, գերության մեջ պահվող ու անհայտ կորած հայորդիների, ինչպես և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրների ուղղությամբ:

Զրուցակիցները նաև մտքեր փոխանակեցին տարածաշրջանում և Միջին Արևելքում զարգացող մտահոգիչ իրադարձությունների առնչությամբ:

Տեղի ունեցավ Գյումրի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծման արարողությունը

Դեկտեմբերի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Շիրակի թեմի Գյումրիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությունը: Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հավատացյալների երկրպագության համար Գյումրի էր բերվել նաև Փրկչի խաչափայտի մասունքը:

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգման աշխատանքներն սկսվել էին դեռևս 1999 թվականից:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Շիրակի թեմի հոգևոր սպասավորներ, մշակույթի ու հասարակական գործիչներ և եկեղեցու օծման առիթով Շիրակի մարզի ու Հայաստանի տարբեր վայրերից Գյումրի ժամանած բազում ուխտավորներ:

Վեհափառ Հայրապետը եկեղեցականների հանդիսավոր թափորով նախ առաջնորդվեց դեպի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու բակում կանգնեցված՝ երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձան, որտեղ ծաղկեպսակի զետեղումից հետո աղոթք բարձրացրեց առ Աստված՝ անմեղ զոհերի հոգիների խաղաղության և հանգստության համար:

Ապա «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Նորին Սրբությունը, իր հայրապետական օրհնությունը բաշխելով ներկաներին, մուտք գործեց վերանորոգված եկեղեցի, ուր սկսվեց վերաօծման սրբազան արարողությունը:



Հընթացս արարողության՝ շարականների ու սաղմոսերգության ներքո ջրով և գինով լվացվեց տաճարի Սուրբ Սեղանը: Այնուհետև աղոթքների ընթերցումից հետո խորան բարձրացվեց սրբալույս մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց եկեղեցու Սուրբ Սեղանի օծումը:

Մինչ այդ՝ դեկտեմբերի 5-ին, կատարվել էր Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու նավակատիքի արարողությունը:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետը Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծման առիթով իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին՝ հայց վերառաքելով երկնավոր Տիրոջը՝ վերանորոգված պատմական աղոթավայրի հավետ պայծառության, այլև հայրենի երկրի խաղաղության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի ապահովության ու բարօրության համար:

«Հարյուրհիսունամյա այս տաճարը, որ խոնարհվել էր 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով, աղետից երեսունվեց տարի անց վերստին իր դռներն է բացում քրիստոսասեր ու ավանդապահ գյումրեցի հավատավոր Մեր զավակների և ուխտավորների առջև: Հիշում ենք երկրաշարժն իր սարսափելի հետևանքներով, որ հազարավոր կյանքեր խլեց, շատերին անօթևան դարձրեց, մեր հայրենիքը և ժողովրդին կանգնեցրեց բազում դժվարությունների առջև: Խորհրդանշական է, որ երկրաշարժի նույն օրը կատարում ենք տաճարի վերաօծման արարողությունը: Մեր հոգիները, որ կրում են ողբալի իրադարձության տարիների վիշտն ու վերքերը, եկեղեցու վերականգման առիթով քաջալեր զգացումներով են պարուրվում՝ որպես առհավատչյա նաև այսօրվա մեր կյանքի նեղությունների ու խնդիրների հաղթահարման և մեր ազգի խաղաղ ու բարօր հարատևության: Տասնամյակների ընթացքում աղետահար Մեր ժողովուրդը իր աշխատանքով, բարեկամ երկրների աջակցությամբ շտկեց իր մեջքը և վերածնունդ ապրեց: Նույնպես և Գյումրիի սրտում խոնարհված այս եկեղեցին ավերակներից վեր հառնեց Շիրակի թեմի բարեպաշտ հայորդյաց աստվածսիրության և զորեղ հավատքի վեմի վրա: Հիրավի, հավատքի վեմի վրա է Աստված հիմնում եկեղեցին, ինչպես շեշտվում է մեր հայրերի աղոթքում. «Հիմնեցուցեր զեկեղեցի Քո ի վերայ վիմի հաւատոյ»»,— ասաց Վեհափառ Հայրապետը՝ գոհունակությամբ ընդգծելով, որ Տիրոջ ողորմությամբ այսուհետ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հարկի ներքո վերսկսվելու են աստվածպաշտական արարողությունները, և երկնավոր շնորհներն ու օրհնություններն են բաշխվելու հավատավոր հայորդիներին: ➥ էջ 3

Տեղի ունեցավ Գյումրի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծման արարողությունը

← էջ 2

Իր խոսքում Նորին Սրբությունը հիշեցրեց, որ հայորդիների եկեղեցանվիրումի ու առ Աստված մշտավառ հավատքի շնորհիվ կառուցվող և վերականգնվող ամեն մի սրբավայր դառնում է հույսի ու զորության աղբյուր՝ հայրենիքի հանդեպ սիրով, բարությամբ և ազնվությամբ զորացնելով Քրիստոսին հավատացող ազգի զավակների ոգին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև փաստեց, որ հայ ժողովրդի հոգևոր կյանքը Եկեղեցու շուրջ համախումբ մնալով է ծաղկում, Եկեղեցու շուրջ համախումբ մնալով է ամրապնդվում ժողովրդի կամքը՝ սրբազան արժեքներով ապրելու և դիմակայելու ապազգային ընթացքներին, պայքարելու վասն արդարության ու ճշմարտության և ազգային իրավունքների պաշտպանության:

«Շիրակցիների հավատավոր, աննկուն ոգու յուրօրինակ խորհրդանիշ է այս եկեղեցին: Սիրելիներ, որքան անսասան պահենք ու ամուր դարձնենք մեր հավատքը, այնքան զորություն պիտի ունենանք միասնաբար մեր կյանքի նեղությունները հաղթահարելու, հեռու վանելու քինախնդրությունը, վախն ու խարդավանքը և մեզ պատած վշտերի ու կորուստների խավարի մեջ արշալույս բացելու: Վերականգնված Սուրբ Ամենափրկիչ տաճարը այս իրողության հոյակերտ վկան ու ապացույցն է»,— ասաց Հայոց Հովվապետը՝ պատգամելով ամենքին լինել ոգով անկոտրում և հոգևոր մեր արժեքները դարձնել ամուր հիմը միասնության, առ հայրենին աննվազ սիրո, դարձնել պատվար փորձությունների հաղթահարման և ազգային ինքնության անխաթար պահպանման:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց հավատացյալներին միշտ շեն ու պայծառ պահել Սուրբ Ամենափրկիչ գեղեցկակերտ եկեղեցին, բանուկ պահել ճանապարհը դեպի նվիրական տաճար՝ հաստատելով, որ Մայր Եկեղեցուն հավատարիմ մնալով, մեր վերելքը խարսխելով աստվածահաճո գործերի և ազգանվիրումի վրա՝ կամրագրենք երաշխիքը բարեհույս կյանքի և հզոր, զարգացող հայրենիքի:



Այնուհետև Նորին Սրբությունն իր հայրապետական բարձր գնահատանքը բերեց թեմական առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանին, թեմի հոգևոր սպասավորներին, թեմական և ծխական խորհրդի անդամներին, ինչպես և եկեղեցու վերականգնման գործում իրենց նպաստը ներդրած բոլոր անձանց՝ ի գլուխ տիար Վարդան Ղուկասյանի:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթեց, որ բարձրյալն Աստված Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի հայ ժողովրդին, հոյաշեն Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին և խաղաղություն շնորհի հայրենի մեր երկրին, բարօրություն, ապահով ու անվտանգ կյանք՝ համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծման հիշարժան իրադարձության կապակցությամբ Հայոց Հովվապետը եկեղեցուն ընծայեց Քրիստոսի խաչելության սրբապատկերը՝ որպես մշտաբուխ աղբյուր Սուրբ Էջմիածնից բաշխվող օրհնության, իսկ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանին իր բազմամյա վաստակի և նախանձախնդիր ծառայության գնահատանքով շնորհեց եպիսկոպոսական պանակ:

Ընդառաջ թեմական առաջնորդի միջնորդության՝ Վեհափառ Հայրապետը նաև տիար Վարդան Ղուկասյանին փոխանցեց նրան շնորհված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշանը:

Այնուհետև, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արք. Աջապահյանի, մատուցվեց սուրբ և անմահ պատարագ:

Հավարտ սուրբ պատարագի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի անմեղ զոհերի:

Վարդապետական լանջախաչի շնորհում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական սրբատառ կոնդակով՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում երկարամյա ծառայության բարձր գնահատանքով, վարդապետական լանջախաչ կրելու իրավունք շնորհեց Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Պարույր ավ. քհն. Ավետիսյանին, Կաթողիկոսական գրասենյակի տնօրեն Տ. Վահրամ ավ. քհն. Մելիքյանին և գործավարներ Տ. Խորեն ավ. քհն. Կիրակոսյանին, Տ. Ադամ ավ. քհն. Մակարյանին:

Հանդիսությանը Մայր Աթոռի արարողակարգային և արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը, անդրադառնալով քահանա հայրերի՝ Եկեղեցուն ու ժողովրդին մատուցած գովարժան ծառայությանը, միաբանության անունից շնորհավորեց վերջիններիս նման բարձր պատվի արժանանալու առնչությամբ:

Այնուհետև «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեց Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը:

Կոնդակների հրապարակումից հետո Հայոց Հայրապետը վարդապետական ականակուռ լանջախաչերով զարդարեց եկեղեցականների կուրծքը:

Ապա Տ. Ադամ ավ. քհն. Մակարյանը շնորհների արժանացած քահանա հայրերի անունից իր որդիական երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ հավաստիացնելով, որ պատրաստակամ են նույն նախանձախնդիր ոգով ու նվիրումով շարունակելու իրենց տերունապարգև առաքելությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունն ու շնորհավորանքը բերելով շնորհընկալներին, ուրախությամբ հաստատեց, որ քահանա հայրերն իրենց նախանձախնդիր ծառայությամբ, հանձնառության ոգով, կյանքն ու գործը Աստծուն ու ազգին ընծայելու բարձր գիտակցությամբ առավելագույնն ի գործ են դնում՝ նպաստելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տիրավանդ առաքելության արդյունավորմանը:

Վեհափառ Հայրապետը նաև բարձր գնահատեց քահանա հայրերի վաստակը մյուռոնօրհնության և Մայր տաճարի վերաօծման արարողությունների կազմակերպման գործում, որոնք հոգևոր մխիթարության ու բերկրանքի առիթներ դարձան աշխարհասփյուռ մեր համայն ժողովրդի համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց ներկաներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Աստվածաշնչի և հայ գրականության կապակցվածությունը

Հարցազրույց գրականագետ Դավիթ Գասպարյանի հետ

— Պարո՛ն Գասպարյան, հայ գրականությունը V դարից մինչև նորագույն շրջան գլխավորապես քրիստոնեական հոգեկերտվածքի և գաղափարաբանության խտացում է: Սուրբ Գիրքը ներթափանցել է հայ գրականություն ոչ միայն գաղափարաբանությամբ, այլև խոսքարվեստով: Ինչպե՞ս եք գնահատում Աստվածաշնչի դերն ու նշանակությունը հայ մշակույթի, մասնավորապես՝ գրականության զարգացման գործում:

— Ձեր հարցը մի ամբողջ մենագրական հետազոտության նյութ է: Մեր հոգևոր հայրերը 301 թվականին ծալեցին հայոց գաղափարաբանության և հայոց հավատի նախորդ էջը, հրաժեշտ տվեցին հին աստվածներին և բացեցին քրիստոնեական էջը: Սկսվեց պատմամշակութային մի նոր շարժում, որը փառավորվեց գրերի գյուտով, հինգերորդ և հետագա դարերի մատենագրությամբ, թարգմանական գործով և Թարգմանչաց տոնով: Սկզբից ևեթ հավատի հետ մեկտեղ հիմնային դարձավ հայրենիքի գաղափարը: Անգամ Նարեկացին, որ մեղքերի մեջ կորած մարդուն է ուզում փրկել, խորապես հայ գրող է, ազգային հոգեկերտվածքի մարմնավորում: Եվ այդպես ամբողջ միջնադարը՝ վաղ քրիստոնեական ձեռնարկումներից մինչև Սայաթ-Նովան ներառյալ:

— Զգալի է Աստվածաշնչի ազդեցությունը նաև ժողովրդական բանահյուսության վրա, և կան ակնհայտ ընդհանրություններ երկուսի միջև: Ի՞նչ կառանձնացնեք այդ ուղղությամբ:

— Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, որ ամեն ժամանակ ստեղծում է իր հերոսներին: Եվ բանահյուսության մասին տեղյակ ենք այնքանով, որքանով ժամանակին գրավոր արձանագրվել է: Հապա մի թերթեք հայոց ավանդապատումը և տեսեք, թե քանի բանահյուսական պատումներ են ստեղծվել հենց միայն Նարեկացու մասին, որոնցից մեկին՝ «Գեղ մի կայր Նարեկ ասեն» վերնագրով, գեղարվեստական տեսք տվեց տաղերգու Հովհաննես Թլկուրանցին: Համանման բանահյուսական նյութերով տաղեր են հյուսել Հովհաննես Երզնկացին (հայ քրիստոնյա Հովհաննեսի և մուսուլման Աշայի սիրո պատմությունը, որն ավարտվում է եկեղեցու շինարարությամբ), Առաքել Բաղիշեցին («Տաղ Հովասափու») և այլն: Ի վերջո, բանահյուսություն է «Սասնա ծռեր» վիպասքը՝ իր հաստատուն քրիստոնեական հիմքերով:

— VI դարից սկսած՝ եկեղեցական գրականությունը դառնում է պաշտոնական: Որո՞նք են եկեղեցական գրականության պաշտոնականացման միտումները հայ կյանքում, և ի՞նչ ազդեցություն ունեցավ գրականության վրա:

— Մեր մատենագրությունը դեռևս Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմություններում խորապես եկեղեցական գրականություն էր, որը շարունակեցին նաև Ոսկեդարի մատենագիրները, հետագա մաքառման տարիների հեղինակները՝ Ղևոնդից մինչև Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ուռհայեցի ու Կիրակոս Գանձակեցի.... Եկեղեցին ամեն ինչ էր՝ և՛ կրթական գործի, և՛ հոգևոր կյանքի կազմակերպիչ, որտեղ ծնվում էր նաև գրականությունը՝ Դավթակ Քերթողից սկսյալ, ավելացրեք Նարեկացի, Շնորհալի և մյուս տաղերգուներին, և պատկերը կամբողջանա:

— Պարո՛ն Գասպարյան, Ձեր գրականագիտական անխոնջ գործունեության ընթացքում ստեղծել եք վիթխարի ժառանգություն՝ «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն», «Հայ գրականություն» ուսումնասիրությունների մատենաշար՝ յոթ հատորով, «Եղիշե Չարենց. հայոց բանաստեղծության մայրաքաղաքը», «Ակսել Բակունց», «Գուրգեն Մահարի», «Պարույր Սևակ», «Համո Սահյան» մենագրությունները, որոնք բացառիկ են ու շրջադարձային հայ քննադատության պատմության մեջ: 2022—2023 թթ. հրատարակեցիք «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» և «Չարենց» հանրագիտարանային ընդգրկում ունեցող մենագրությունները: Էլ չեմ խոսում հանրակրթական դպրոցին հասցեագրված ձեր «Գրականություն» և «Հայ գրականություն» դասագրքերի, տեսական ու մեթոդական բազմաթիվ գրքերի մասին. 60-ից ավելի գիտական աշխատություն, բուհական և դպրոցական դասագիրք, որոնցով սերունդներ են կրթվել: Այդ բոլոր գրքերի մեջ երակների պես տեսանելի է Աստվածաշնչի և հայ գրականության կապակցվածությունը: Ըստ գրականության զարգացման շրջափուլերի՝ կընդհանրացնե՞ք պատկերը:

— Քրիստոնեական հոգեկերտվածքը հայ գրականությամբ, հայ մշակույթով զբաղվող յուրաքանչյուր նվիրյալի առաջնային գերակայությունն է: Միջնադարի հոգևոր բարձր արժանապատվությունը, Աբովյանից սկսած, վեպերով, վիպակներով, բանաստեղծություններով ու պոեմներով շարունակվեց հետագա բոլոր գրողների ստեղծագործություններում: Հոգևոր այդ ինչ հզոր լիցք ունեն Թումանյանն ու Տերյանը...

Խորհրդային գաղափարախոսությունն ուղղվեց Աստծու դեմ, և այդ երկրում տեղի ունեցան բազմաթիվ չարագործություններ՝ քաղաքացիական պատերազմ, կոլեկտիվացում, 1937 թվական, երկրորդ համաշխարհային պատերազմ, 1949 թվականի բռնություններ ու աքսորներ, որոնց զոհ գնացին տասնյակ միլիոններով հաշվվող մարդիկ: Ընկավ բարոյականությունը, ավելացան մատնությունն ու զրպարտությունը, կեղծիքը, սուտը, գողությունն ու անբարոյականությունը դարձան կյանքի օրենք: Աստծու մարդը դարձավ սատանայի գործակալ: Ծանր ժամանակ ապրեց մտավոր կյանքը: Գրողներն ստիպված ստեղծեցին ընդհատակյա խոսքի լեզու՝ փոխաբերական և գաղտնագրված: Այս չարաղետ հեղեղին ևս դիմակայեց գրականությունը:

Ամեն մի ժամանակաշրջան փորձում է կյանքը հարմարեցնել իր գաղափարախոսությանը և դրանից բխող իր շահերին: Մեծ գրականության խնդիրն ու նպատակը բնական, լիարժեք մարդն է՝ որպես հերոս և օրինակ ամեն տեսակի շեղումների մատնված, քաղաքական ճառերի մեջ տրորված, սև լրահոսի ու կյանքի հարվածների մեջ ոչնչացած մարդու խրտվիլակի համար: Այդ ժամանակաշրջանը մեկ կոչվեց սոցիալիստական-կոմունիստական, մեկ ժողովրդավարական-մարդասիրական, բայց երկու դեպքում էլ անեծքը չկտրվեց մարդուց: Ի՞նչ է նշանակում, որ աղջիկը դառնա տղա, և տղան՝ աղջիկ, արանքում էլ ձևավորվի երրորդ սեռի քերականական մի ոչնչություն: Այս ամենը դեմ է Աստծու աշխարհին և կյանքի բնական դրվածքին: Ուստի՝ եկեղեցին իր հերթին, առողջ արվեստը՝ իր, կանգնած են մշտանորոգ մարտահրավերների դիմաց: Այդ մարտահրավերներն ամբողջ հայ գրականությունը բոլոր ժամանակաշրջաններում ընդունել է և դիմակայել...

— Առանձին ստեղծագործ անհատների, այնուամենայնիվ, կխնդրեինք անդրադառնալ: Թերևս Նարեկացի—մարդ—Աստված հարաբերությունը առանձնացնենք միջնադարյան շրջանից:

— Նարեկացու աշխարհայացքի հիմքը մարդկային-երկրային սկիզբն աստվածային-երկնային հավերժության մեջ տեսնելու գաղափարն է: Հանուն այդ գաղափարի իրականացման՝ նա պատրաստ է բառացիորեն ամեն ինչի: Նարեկացու քնարական հերոսը Մարդն է՝ հենց ինքը, իր միջոցով՝ հոգու փրկությանը հավատացող համայն մարդկությունը: Ինքը՝ սրբակրոն մի վարդապետ, որ ամեն կերպ փորձում է մերձենալ Աստծուն, բայց ինքը Աստված չէ: Ինքը, որ հողեղեն, ամեն վայրկյան մեղքերի գայթակղությանը ենթակա մի վանական է, հոգին՝ երկնքում, մարմինը՝ երկրում, իսկ ամենատես հայացքը՝ երկրի ու երկնքի արանքում, որպես հավիտենական առեղծվածները տեսնող և տեսածը լիարժեքորեն վերապատմող մի ոգի: Մեղապարտ անհատի ցանկությունները բախվում են կատարյալ Աստծուն հասնելու անհնարինությանը, ինչն էլ դառնում է կյանքը միմիայն այդ ցանկությամբ իմաստավորող Մարդու ողբերգության պատճառ: Իրականության և երազանքի հակադրությունը նրան մղում է դեպի միստիցիզմ և Մարդ-Աստծու փիլիսոփայություն: Աստված, ըստ Նարեկացու, իր կերպարին համապատասխան ստեղծել է Մարդուն, որը հետո կորցրել է աստվածային բնույթը: Իսկ Ինքը՝ Աստված, մի կատարյալ էություն է, Որ Իր մեջ ունի մարդկային ամեն ինչ՝ բացի մեղքից: Աստված Քրիստոսի տեսքով մարդացավ, որպեսզի մարդը Քրիստոսի տեսքով աստվածանա: Այսինքն՝ Նարեկացու Աստվածը կատարյալ Մարդն է, իսկ բաղձանքը՝ որ կամ Աստված քայլի երկրի վրա, կամ մարդկությունը հայտնվի երկնքում՝ Աստծու կողքին: Աստված նաև ամենակարող է ու հավերժական, Որի առջև մարդկային բոլոր սերունդների անցած ու անցնելիք ճանապարհն է: Նարեկացին հանդես է գալիս որպես այդ սերունդների ձայնի խտացում, ոգու մարմնացում, որ բոլորի անունից խոսք է ուղղում բոլորի Աստծուն:

Սուրբ Գրքի տիրական ազդեցությունը շատ հզոր է Նարեկացու ստեղծագործության վրա, ինչը շատ բնական է, և այդպես էլ պետք է լիներ: Նարեկացին գեղարվեստական ավանդույթի և նորարարության մի յուրօրինակ արտահայտություն է. որքան ավանդապահ, նույնքան էլ ավանդախախտ, այսինքն՝ նորարար, որքան միտված դեպի անցյալը՝ դեպի Սուրբ Գիրքը, նույնքան էլ դեպի իր ժամանակի մարդը, իսկ առավել չափով՝ ուղղված դեպի ապագան: Այսօր Նարեկացին այդ առումով ասես կշեռքի նժար լինի, որից հազար տարի այն կողմ քրիստոնեության սկիզբն է, հազար տարի այս կողմ՝ արդիականությունը:

Անսահման կատարելության ձգտող Նարեկացու ոգին դառնում է համատարած ձայն, որը նրա էությունը կապում է տիեզերքի անվերջությանը ու դարձնում հավերժության մասնիկը: Ունկնդրելով այդ ձայնը՝ անհնարին է չզգալ վեհության անմատչելիությունն ու չիաղորդակցվող այն ահավոր ողբերգությունը, որ առաջանում է այդ անմատչելիությունից: Ինչքան մարդը մաքրվում է մեղքերից, և թվում է, թե ուր որ է պետք է հասնի կատարելության, այնքան այդ կատարելությունն իր հերթին ավելի անհասանելի է դառնում: Տարածությունը մարդու և կատարելության միջև միշտ մնում է նույնը, որովհետև մարդու կատարելագործումը սոսկ քայլ է տիեզերական անհունության մեջ: Բայց Նարեկացին չի հուսահատվում, անընդմեջ շարժվում ու ձգտում է առավելագույնին:

«Կարող ենք լինել մենք Աստված նույնիսկ՝ շնորհներով ընտիր...»,— ամբողջ «Մատյան ողբերգության» պոեմն այս Աստված լինելու հնարավորության և չլինելու անկարելիության ողբերգությունն է, որ առաջանում է մարդու մեջ: Աստված «լինելու» համար պետք է մաքրագործվել, որ նշանակում է ընդունել համայն մարդկության բոլոր մեղքերը և խոստովանել: Սա սկիզբ, բայց վախճան չունեցող հարաճուն մի ընթացք է: Հիմա, ինչպե՞ս են իրար մերձենում միստիցիզմի գաղտնախորհուրդ ու գաղտնածես գաղափարները և մի կողմից՝ Մարդ-Աստծու, մյուս կողմից՝ Աստված-Մարդու փիլիսոփայությունը: Այդպես է, որովհետև Նարեկացին ոչ միայն երկրից ծնկաչոք երկինք է նայում, այլև երկնքից՝ երկիր: Մարդ-Աստծու և Աստված-Մարդու փիլիսոփայությունն այն հակադրամիասնությունն է, ինչը բնորոշ է Նարեկացու ամբողջ աշխարհընկալմանը: Նարեկացին իր մեջ համատեղում է այդ երկու եզրերը՝ ներքին վիթխարի լարումի գնով: Նարեկացին իր կերպարով նմանվում է Քրիստոսին...

— Միջնադարում նկատելի դարձան քրիստոնեական թեմաների աշխարհիկացման միտումները: Ի՞նչ առանձնահատկություններ բերեցին դրանք այդ շրջանի գրականություն:

— Դա քայլ էր գաղափարական խորհրդանշանից, քարոզչական խոսքից դեպի բնություն և բնության տարերքն իր մեջ ամբարող իրական մարդը: Քրիստոնեական գաղափարախոսությունն աշխարհիկացվում է, հոգևոր խորհրդանիշ է դառնում բնաշխարհի խորհրդանիշը: Այդ նոր ճանապարհի սկզբնավորողը Կոստանդին Երզնկացին է:

— Չարենցագիտության մեջ շարունակում եք նշանակալի բացահայտումներ անել: Վերջերս նոր գիտական աշխատանք եք գրել՝ «Չարենցի ճանապարհը դեպի Աստված»՝ Չարենցին էլ ավելի հասու դարձնելով, մերձեցնելով ընթերցողին: Չարենց—Աստված երկխոսության հոգևոր պատմությունն ի՞նչ ընթացք ունեցավ:

— Չարենցը, որ հեղափոխության բանաստեղծ էր, հիասթափվեց այդ հեղափոխությունից, որն զբաղված էր մարդակերությամբ, և Կոմիտասի, Գրիգոր Ծերենց Խլաթեցու ու Նարեկացու միջոցով ճանապարհ բացեց դեպի Աստված: Խոսք ուղղեց Տիրոջը և գրեց իր «Լեռան աղոթքներ»-ը: Ահա այսպես՝ հեղափոխության ու քաղաքացիական պայքարի բովով անցած Չարենցը կյանքի վերջին դժվարին տարիներին գտավ իր Աստծուն: Չեմ շարունակում, ավելացնեմ միայն, որ, այո՛, այդ մասին գրել եմ առանձին ուսումնասիրություն՝ «Չարենցի ճանապարհը դեպի Աստված»:

— Մարդ—Աստված փոխհարաբերության խոհափիլիսոփայության մեջ գեղարվեստական բոլորովին ուրիշ մակարդակ նշանավորեց Հովհաննես Շիրազը՝ տիեզերքի արքա հռչակելով աստվածաստեղծ մարդուն: Մարդու՝ որպես տիեզերքի ամենակարող ուժի փառաբանությունը Շիրազի պոեզիայում ի՞նչ նախահիմքեր ունի:

— Խոհափիլիսոփայական մտորումներով Շիրազի մարդերգությունն արծարծում է կյանքի ու մահվան առեղծվածի, մարդու կատարելագործման, չարի ու բարու, կյանքի իմաստի և ունայնության հարցերը: Շիրազը նախ պատկերում է բնության հզոր ուժերի առջև թույլ ու երեր մարդուն, որը, աստիճանաբար իմաստնանալով, դառնում է իր ու աշխարհի տերը: Մարդը, ըստ Շիրազի, ամեն ինչ է, այսինքն՝ Աստծու և սատանայի խառնուրդ: Բարի և չար ուժերի ներքին պայքարն էլ իմաստավորում է մարդու բնույթը: «Ինքներգանք համամարդկային» պոեմում մարդը պատկերվում է իր գոյության հնարավոր բոլոր ձևերով. «Մերթ գաղտնիքի սուզանավ ես, մերթ՝ համբավի հրթիռ, // Դու մերթ տերն ես տիեզերքի, մերթ՝ շրջմոլիկ անտուն...»: Այս ճանաչողական բնութագրումները Շիրազին հասցնում են մարդու՝ որպես բնության պսակի իմաստավորմանը, որի արդյունքը «Բնության գլուխգործոցը» պոեմն է: Աստվածաշնչյան «Գիրք ծննդոց»-ի հանգույն Շիրազը ստեղծում է իր «Բնության գլուխգործոցը» պոեմը, որի մեջ մանրամասնորեն նկարագրում է մարդու ծագումնաբանության պատմությունը: Մարդ, որի շաղախը հյուսված է աստղանյութից, և որը դժվար ինքնաճանաչողությամբ անցնում է դեպի ամբողջացում տանող հոգևոր զարգացման ճանապարհ. «Աստվածանալուդ ճանապարհներին // Դու դեռ սանդուղքի մի քարն ես ելել»: Շիրազը գալիս է այնպիսի հետևության, որ անմահությունը կատարելության հասած մարդկային կյանքի նպատակ կարող է լինել և ոչ թե անկատար կյանքի պահանջ: ➥ էջ 6, 7

Առակներ

Անտառի հեքիաթը

Սնկերը գանգատվեցին, որ սաղարթախիտ, լայնատարած անտառի պատճառով իրենց շատ անգամ հասու չեն լինում արևի շողերը:

— Մենք հաճախ մրսում ենք ու գոսանում, մինչդեռ կարող էինք էլ ավելի տաքություն կլանել ու բարձրանալ,— ասացին նրանք:

— Մենք նույնպես նեղությունների մեջ ենք,— հակադարձեցին ծառերը,— մեզ էլ հաճախ չեն բավականացնում արևի լույսն ու ջերմությունը, իսկ եթե լայնարձակ տերևներ չունենանք, կարող ենք զրկվել խոր արմատներից, և ուժգին քամիները մեզ կգետնեն:

Սնկերը պատասխանեցին.

— Չեն գետնի, անտառում շատ այլ ծառեր կան, որոնք ընդարձակ սաղարթներ չունեն, բայց չեն կործանվում:

Ծառերը պատասխանեցին.

— Բայց չէ՞ որ մեր ճյուղերը շատ անգամ նաև ձեզ են պաշտպանում՝ թե՛ տարաժամ քամիներից և թե՛ արևի կիզիչ ճառագայթներից:

— Մենք էլ ձեր արմատներն ենք խնամարկում՝ պարարտացնելով ու փափկացնելով հողը,— պատասխանեցին սնկերը,— ոչի՛նչ, մի կերպ կդիմանանք, միայն թե դուք փոքրինչ հետ քաշեք ձեր սաղարթները:

Արևը, որ այս ամբողջ ընթաքում լուռ հետևում էր սնկերի ու ծառերի վեճին, ժպտալով արձագանքեց.

— Դուք իզուր եք վիճաբանում, քանի որ շատ շատերից ավելի երանելի եք. ամենքիդ էլ փոքրիշատե հասու են իմ ջերմությունն ու լույսը: Այնինչ շատ վայրեր կան, որտեղ վիճակն անմխիթարական է: Ուրա՛խ եղեք և հա՛շտ ապրեք՝ սատարելով ու պաշտպանելով մեկմեկու, որովհետև բավականին դժվարություններ կան, որոնք տակավին ձեզ հասու չեն:

Բայց ո՛չ սնկերը, ո՛չ էլ ծառերը մտադիր չէին հաշտվելու:

Որոշ ժամանակ անց երկրում երաշտ սկսվեց: Ցամաքեցին նաև անտառով անցնող խոխոջուն առվակները, իսկ խռովահույզ փոթորիկներն իրար հետևից սկսեցին տեղահան անել անտառի հաստաբուն ծառերը: Դրանցից շատերն ընկան սնկերի վրա և ճզմելով՝ ոչնչացրին նրանց: Երաշտի անցնելուն պես՝ սկսվեցին ծանրակաթիլ ու հորդահոս անձրևներ: Հեղեղներն իրենց ճանապարհին սրբեցին-տարան գրեթե ամեն ինչ: Իսկ երբ թվում էր, թե ամեն բան այլևս անցյալում է, անտառ ներխուժեցին փայտահատները: Նրանց ոտքերի տակ անհետացան սնկերից մնացած մանր փշրանքները, իսկ սուր կացինները բնաջինջ արեցին թե՛ դալար ոստերն ու լայնածավալ սաղարթները, թե՛ դեռ կանգուն ծառերը:

Այսպես, անտառը, տակավ առ տակավ ամլանալով, նոսրացավ, հողին հավասարվեց ու ամայացավ...

Վանականն ու երիտասարդը

Հեռավոր լեռնալանջերից մեկում մի ծեր վանական էր ապրում: Մի օր նրան է մոտենում երիտասարդ մեկը և ասում.

— Ես էլ եմ ուզում ճգնակյաց դառնալ ու հոգևոր կյանք վարել:

Ի պատասխան՝ վանականը հարցնում է.

— Իսկ դու հոգևոր կյանքի փորձառություն ունե՞ս, որովհետև կամենալն ու կարենալը նույնը չեն:

— Որոշ չափով ունեմ,— պատասխանում է երիտասարդը:

— Երբևէ ապրե՞լ ես մեն-միայնակ,— հետևում է հաջորդ հարցադրումը:

— Այո՛, շատ անգամ:

— Իսկ եղբայրների հե՞տ,— հետաքրքրվում է վանականը:

— Պատահել է՝ և եղբայրների՛ հետ:

— Այդ դեպքում մի հարց էլ տամ. երբևէ սիրե՞լ ես...

— Բայց ի՞նչ կապ ունի՝ սիրե՞լ եմ, թե՞ ոչ, ինչո՞ւ եք ինձ հոգեհան անում,— վրդովված արձագանքում է երիտասարդը,— աշխարհն ինձ հետաքրքիր չէ: Ես ցանկանում եմ հոգևոր վարքով ապրել:

— Չե՞ս սիրել, թե՞ չես կամենում այդ մասին բարձրաձայնել:

— Չէ՞ որ ասացի՝ ինձ աշխարհիկ կյանքը չի գերում: Հենց այդ պատճառով էլ փափագում եմ մարդկանցից հեռու լինել և Աստծուն՝ մոտ:

— Իսկատիպ վանականը մանկան նման է, աշխարհում քայլում է նոր քայլեր անող մանկան պես և ընկնում անընդհատ: Դժվար, իրապե՛ս դժվար է մաքուր մնալ աշխարհի անմաքրության մեջ: Գոյարարը մարդուն ստեղծել է Իր բարերար կամքով, լիակատար անկեղծությամբ և պատկերով՝ շնորհելով առատ պարգևներ, որպեսզի մարդն Իրեն գործակից լինի և ժառանգի անմահությունը: Ապրել՝ համաժամանակ նշանակում է հավատալ ու զոհաբերվել և բաժնեկից դառնալ անմահությանը, իսկ սիրել նախևառաջ նշանակում է հրաժարվել չարից ու աստվածանմանվել:

— Հիմա դատողություններդ շատ ավելի խորիմաստ և անվրեպ են, և ես էլ միանգամայն համաձայն եմ, իսկ ժամանա՞կը,— հետաքրքրվում է երիտասարդը:

— Ժամանակը նման է մի այգու, որի ծառերն ու մերկասերմերը, շարունակ փոխարինելով միմյանց, պարբերական հաջորդականությամբ աճում, ծաղկում ու թառամում են: Ամեն բան վերջավոր է, չի վերջանում միայն կատարյալը... Ենթադրում եմ, որ մեծ հիասթափություն ես ապրել, թեև տրամադիր չես այդ մասին բարձրաձայնելու,— կրկին վրա է բերում վանականը, որին ի պատասխան՝ երիտասարդը շիկնելով՝ գլուխը կախում է:

— Իսկ քեզ հետաքրքի՞ր է իմ կարծիքը:

— Իհարկե, չէ՞ որ խոստովանեցի, այլապես ինչո՞ւ պիտի այսչափ հեռավորություն կտրեի՝ Քեզ մոտ գալու համար,— դիմադարձում է նա:

— Այդ դեպքում կընդունե՞ս իմ հորդորը, որովհետև հակառակ դեպքում իմաստ չեն ունենա ո՛չ քո գալը, ո՛չ իմ խորհուրդը:

Երիտասարդը լուռ համաձայնում է:

— Ով պատրաստակամ է սրտով, հավիտենականության հույս ունի, բայց որտեղ չկա հեղինակություն, ընդհանրությունը կարող է վերածվել ամբոխի: Ես այնպես եմ հասկանում,— ասում է վանականը,— որ դու, դժբախտաբար, կարելիություն չես ունեցել աշխարհն ու մարդկանց լավ կողմից ճանաչելու: Բայց իմացի՛ր, որ ազատությունն ու ազնվացումն այլ կերպ չեն լինում, եթե ոչ՝ տառապանքի, և անխոհեմություն է ատելության մեջ արդարություն որոնելը: Եթե իրապես փափագում ես հոգևոր կյանքով ապրել, նախ վերադարձի՛ր և լրացրո՛ւ պակասդ, որովհետև Աստծուն արժանի է նա, ով բաժին է հանում և բաժնեկից է դառնում Նրան:

— Ինչպե՞ս վերադառնամ, չէ՞ որ հենց նոր խոստովանեցի, թե որքան տրտմած ու հիասթափված եմ աշխարհից էլ, մարդկանցից էլ:

— Ամեն ճշմարիտ ապրում լիարժեք նեղության ծնունդ է, իսկ ամեն ազնիվ ապրում՝ շարունակական, ինչպես նաև չափազանց դժվար է սեփական մեղքը հասկանալն ու ընդունելը:

— Բայց... բայց...— կարկամում է երիտասարդը:

— Վերադարձի՛ր,— կրկին հորդորում է վանականը՝ ասելով,— տառապանքը բացառիկ մարդկանց առաքինությունն է: Հոգևոր կյանքով ապրելու կամ առավել ևս Աստծուն մոտենալու առաջին ու բնական անհրաժեշտությունը սիրելն է, նաև առաջին պատվիրանը, որ մարդկությունը ժառանգել է Աստծուց: Բայց այնքան ժամանակ, քանի դեռ մարդ բեռնավորված է անձնական վշտերով, չի կարողանալու ո՛չ հոգևոր առաջընթաց ունենալ, ո՛չ Աստծուն մերձենալ: Ինքն Աստված էլ տառապում է Իր ստեղծագործությունների համար և օրինակ տալիս: Եվ եթե մեկը դեռ չի ըմբռնել նեղությունների էությունը, նշանակում է՝ մարդու բուն կոչումը իր իսկ համար տակավին բացահայտված չէ:

Այս խոսքերից հետո երիտասարդը խորհուն ու տրտում հեռանում է:

— Ոչինչ այնքան չի մոտեցնում Աստծուն, որքան աղոթքով ու բարի գործերով ուղեկցվող երկյուղը,— ձայնում է ծեր վանականը նրա հետևից:

Ժամանակ անց երիտասարդը դարձյալ հետ է դառնում, բայց որքան փնտրում է ծեր վանականին, չի գտնում: Որոշում է բնակություն հաստատել նրա խցում...

Տարիներ հետո՝ մի առավոտ, արդեն ճերմակած մենավորին է մոտենում մի պատանի ու անհոգությամբ ասում.

— Լեռներում բնակվող ճգնավորի մասին ես լսել եմ դեռ այն ժամանակ, երբ մեր տան մեծերը ողջ էին: Եվ հիմա էլ դժվարանում եմ զսպել զարմանքս. ասա՛ ինձ՝ ինչպե՞ս է Քեզ հաջողվել տարիների ընթացքում այսչափ երիտասարդ ու առույգ մնալ: Եթե հնարավոր լիներ, թերևս ես էլ կուզենայի Քեզ պես առույգ ու երկարակյաց լինել:

— Տիեզերքի մեջ ամեն գեղեցիկ բան Աստծո ստվերից է գոյանում, բայց ամեն բան անցողիկ է, մնայուն է սոսկ արժեքը, որը փշրանքն է կատարելության,— պատասխանում է մենակյացը՝ հայելով պատանու աչքերի խորքին:— Ստույգ ըմբռնելու համար մարդկային կյանքի նպատակը հարկավոր է անցյալին նայել ներկայի և ներկային՝ անցյալի հայացքով, քանի որ կյանքի արժեքն անցած տարիները չեն, այլ՝ նվիրումը, երբ անհատը հանուրի և հանուրն անհատի բարօրության ելակետից են գործում՝ ի խնդիր բարոյական վերածնության:

— Այդ ինչպե՞ս...

— Արդարությունն ու ճշմարտությունը ճանաչելն ամբողջությամբ միայն Աստծուն է ներհատուկ: Բայց որտեղ բարություն կա, այնտեղ առաքինություններն առկա են զգալիորեն:

— Հետաքրքիր է,— վրա է բերում պատանին,— կարո՞ղ եմ մի ուրիշ առիթով էլ Քեզ այցելել, քանի որ շատ տպավորվեցի:

— Անտարակո՛ւյս... Տիեզերքը հսկայածավալ մի գրադարան է, որի ամեն մի ստեղծագործություն հուշում, պատմում ու ներկայացնում է Աստծո փառքը,— ձայնում է մենակյացը հեռացող պատանու հետևից...

Նախապատվություն

Հին ժամանակներում մի սրբակենցաղ մարդ կար, որի հիմնական անելիքն աղոթքն էր և Աստծո խոսքի տարածումը: Նա հաճախ էր ճանապարհորդում՝ այցելելով տարբեր եկեղեցիներ և վկայելով Աստծո մասին: Եվ քանի որ ճանապարհորդելիս հոգնում էր, որոշ ժամանակ անց մտադրվեց մի ձի գնել: Այժմ էլ ձիով էր ճամփա ընկնում և ավելի երկար: Բայց ամեն անգամ ձին եկեղեցու դռանը թողնելիս մտածում էր՝ չլինի՞ հանկարծ կենդանուն գողանան, ու ինքը կրկին ոտքով գնա:

Ժամանակի ընթացքում ձին կորցնելու նրա մտավախությունն այնքան սաստկացավ, որ ամեն անգամ եկեղեցի մտնելիս ավելի անհանգստանում էր ձիու, քան աղոթքի ու քարոզչության մասին: Եվ մարդը որոշում է ձին վաճառել ու ավանակ գնել՝ դատելով, որ թերևս ավանակն այդքան ուշադրություն չի գրավի: Հիմա արդեն ամենուր ավանակով էր գնում և ավելի կենսախինդ էր: Բայցևայնպես, կարճ ժամանակ անց՝ աղոթքի պահին, կրկին նույն սրտնեղությունն է համակում նրան: «Ճիշտ է,— եզրակացնում է նա, — ավանակն այնքան աչքառու չէ, բայց ո՞վ կարող է երաշխավորել, որ չի գողացվի: Չին իր գերադասողն ունի, ավանակը՝ իր»:

Աղոթքի վերջում, սակայն, հանկարծ զգում է, որ ինքն էլ իր նախապատվությունները պետք է ճշգրտի. կա՛մ պիտի աղոթքով ապրի ու քարոզչությամբ, կա՛մ՝ իր ունեցած կենդանիները չկորցնելու հոգսով: Այս մտորումներով եկեղեցուց դուրս գալով՝ իսկույնևեթ ազատ է արձակում ավանակին և մինչև կյանքի վերջն ամենուր ոտքով էր գնում...

Տ. Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԱԽԷ... ԱՆՍԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ...

Սաղմոսները Համառեա Ավետարաններում

Վասպուրականի Ավետարան, 1392 թ., նկարիչ՝ Հովհաննես Խիզանացի

Ինչպե՞ս են սաղմոսները կենդանության շունչ տալիս տարբեր մշակութային միջավայրերում ապրող մարդկանց աղոթքներին, ո՞րն է Սաղմոսաց գրքի բացառիկ երևույթը:

Մինչ օրս Եկեղեցու ծիսական կյանքից անբաժան են սաղմոսները, որոնք պարտադիր բաղկացուցիչն են Հայ Եկեղեցում կատարվող բոլոր արարողությունների և խորհուրդների: Դեռ վաղ շրջանից Եկեղեցին Սաղմոսարանի միջոցով կարողացել է տեսնել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ներկայությունը և ապրել Նրանով: Քրիստոնյաներս, սաղմոսներով աղոթելով, հաղորդակցվում ենք Քրիստոսի հետ և սովորում առանց տրտնջալու առաջ գնալ տառապանքների, փորձությունների և դժվարությունների միջով: Սաղմոսները, իսկապես, խոսում են Հիսուս Քրիստոսի ձայնով, իրենց մեջ պարունակում են Նրան:

Սուրբ Աթանաս Մեծի բնորոշմամբ՝ Սաղմոսաց գիրքը ներառում է բովանդակ Օրենքն ու մարգարեներին, որի բարձրակետը Հիսուս Քրիստոսի մասին մարգարեություններն են:

Հին Կտակարանն իր վերջնական կետին հասավ հենց Քրիստոսով, Որ եկավ օրենքը լրացնելու, իրականացնելու (հմմտ. Մատթ. 5:17), և հենց Նրա տված լույսի միջոցով արդեն մենք՝ քրիստոնյաներս, կարողանում ենք ներթափանցել Հին Կտակարանի խորհրդավորության մեջ՝ ապրելով Աստծու հետ մի երջանիկ կյանք:

Ավետարանները մեծ հետաքրքրություն են դրսևորում Հին Կտակարանի, մասնավորապես՝ սաղմոսների նկատմամբ: Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների չորրորդ, իսկ Մարկոսի Ավետարանի առաջին գլուխներում ներկայացված է մեր Տիրոջ փորձությունը: Փրկչի երեք փորձություններից երկրորդը սատանան ներկայացրեց սաղմոսի միջոցով. «Նրա հրեշտակներին պատվիրված է քո մասին, որ քեզ պահպանեն քո բոլոր ճանապարհներին: Իրենց բազուկների վրա պիտի վերցնեն քեզ, որ երբեք ոտքդ քարին չխփես» (Սաղմ. 90:11—12):

Քրիստոսը սատանային, որը փորձում է հենց Աստծո խոսքով, պատասխանում է Սուրբ Գրքով. «Տիրոջը՝ քո Աստծուն, չփորձես» (Բ Օր. 6.16): Սաղմոս 90-ն իր մեջ պարունակում է Աստծու թևերի ներքո ապաստան գտնելու, թշնամիներից, հիվանդություններից և վտանգներից պաշտպանվելու, Աստծուն ապավինողների՝ հրեշտակների կողմից պահպանության, աստվածասերների հաղթանակի ու փրկության խոստումներ: Սաղմոսն իր էությամբ վստահության խորհուրդն ունի, սակայն սատանան այն օգտագործում է մոլորեցնելու, Աստծուն վստահելու փոխարեն՝ Նրան փորձելու համար: ➥ էջ 7

Աստվածաշնչի և հայ գրականության կապակցվածությունը

➥ էջ 4

Ուստիև՝ անմահությունը դեռևս անհասանելի է մարդկային ցեղին, որն իր կատարելության ճանապարհին տակավին սանդուղքի մի քարն է ելել: Սա մարդու և քաղաքակրթության զարգացման ամբողջ ընթացքի պատմությունն է՝ դրված շիրազյան շքեղ պատկերների մեջ: Այս նյութը շարունակվում է «Աշխարհի հավերժությունը» պոեմում: Մարդու արարչագործությանն այստեղ հաջորդում է մարդկային տարբեր ցեղերի ու լեզուների ստեղծումը: Քարանձավաբնակ վայրենի մարդուն Շիրազն օժտում է լեզվով. դա ծաղիկների լեզուն է: Աստված լեզու է տալիս մարդուն, որ նա իր ցավը պատմի, գաղտնիքները վերծանի: Հայոց լեզուն, Շիրազի պատկերացմամբ, կակաչածնունդ է, որը կրակի բոց ունի ու ցավի սև:

Ահա տիեզերքի մեջ մարդու տեղի ու դերի այս մտայնության խտացումն է «Բիբլիական» պոեմը, ըստ որի՝ տառապանքն ու ցավը մարդուն մաքրում են մեղքերից, դարձնում հնարամիտ, հրաշագործ, անընդհատ որոնող, ինչն էլ իմաստավորում է կատարելության հասնելու մարդկային ձգտումը: Մարդկային չիրագործված երազանքների, հավերժական ձգտումների, մարդու ամենակարող և անթերի վիճակը կրող Աստծու որոնումը Շիրազը պատկերում է ամբողջ պոեմի ոգին խտացնող այս արտահայտությամբ. «Այնինչ՝ ննջում էր Աստված իր հոգում»: Այսինքն՝ կատարյալը մարդու մեջ է, և նրա տենչը՝ հասնելու իր երազային լրիվությանը, իր էության մեջ կատարվող ներքին պայքարն է: Տառապանքների հաղթահարմամբ իմաստնանալով՝ մարդն սկսում է ցավերը համեմատաբար հեշտ տանել. «Եվ տիեզերքում լոկ մարդը անեղծ // Վշտին հաղթելով՝ դարձավ իմաստուն»,— գրում է բանաստեղծը և հանգում այն եզրակացության, «Որ ոչ թե Աստված ստեղծեց մարդուն, // Այլ մարդն իր ահից ստեղծեց Աստծուն»: Մարդն այսպես դառնում է ամենակարող, տեր ու տիրակալ: Վերջին պահին Անհայտ ոգին հայտնվելով՝ նրան է ժառանգում տիեզերքը մեծ, որ իր մտքի թափով նրա արքան դառնա ու հրաշքներ ծնի:

«Ոգու կատարյալ ներդաշնակության» հասնելու ցանկությամբ «Բիբլիականը» հիշեցնում է Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի ընդհանուր ոգին: Նարեկացու քնարական հերոսն ինքն իրեն հաստատում է Աստծու առջև իր թերի, աղավաղված էության խոստովանությամբ և ձգտում դեպի կատարյալը, որն անհասանելի է: Նարեկացին պահպանել է կատարելության ձգտման հավերժական գաղափարը: Շիրազի պոեմում մարդն իրեն առավել չափով շարժման է մղում ցավի ու վշտի արտաքին ազդակներով, որոնք, աստիճանաբար վերածվելով ներքին հոգեբանական գործոնի, նրան պարտադրում են մաքառումներով նվաճելու իր կարողության սահմանները: Շիրազի քնարական հերոսը «ոգու ներդաշնակության» հասնելու ուղին սկզբում որոնում է իրենից դուրս և ապա միայն գիտակցում, որ իրենից դուրս եղածը կա այնքանով, որքանով արտացոլված է իր գիտակցության և երազանքների մեջ: Այդ իսկ պատճառով նրա հայացքն աստիճանաբար ուղղվում է իր հոգու խորքը, որն իր մեջ ընդգրկում ու խտացնում է ամբողջ տիեզերքը:

— Լույսն ու լուսերգությունը՝ որպես գեղարվեստական գրականության ոգի, քրիստոնեական ակունքներ ունեն՝ մարդու հոգևոր մաքրագործման, բարոյական խավարի կրճատման առումով: Պարույր Սևակի «Եղիցի լույս» գիրքը՝ իբրև ժամանակի և մարդու միջև բացված երկխոսության բարձրագույն արտահայտություն, որքանո՞վ էր շարունակում Նարեկացու և Շնորհալու գեղագիտական իդեալը և ի՞նչ նշանակություն ունի այսօր: Կխնդրեինք անդրադառնալ նաև «Մարդը ափի մեջ» ժողովածուին, որ գեղարվեստական նախադրյալ էր «Եղիցի լույս»-ի համար:

— Ժամանակակից մարդու ներաշխարհը Պ. Սևակը հայտնաբերեց նախ՝ «Մարդը ափի մեջ» շարքում, որն սկսվում է հետևողական ինքնաճանաչումից և, աստիճանաբար ընդարձակելով իր սահմանները, ընդգրկում մարդ և դարաշրջան, մարդ և հանրային կյանք, մարդ և մարդկայնություն հարաբերությունները: Մարդը դիտվում է այն բոլոր հնարավոր վիճակների ու գործողությունների մեջ, ուր կարող է բացել իր ինքնությունը, իր ինքնությունը հարաբերության մեջ դնել շրջապատի հետ, մեծ աշխարհի հետ, իդեալական մարդու պատկերացման հետ: Այստեղից էլ սկսվում է ինքն իր միջուկին հասնել ձգտող, ժամանակի խոր ու դրամատիկ զգացողություն ունեցող մարդանհատի ինքնախոստովանությունն ու ինքնաբացահայտումը:

Շարքն ունի ներքին քնարական սյուժե, որի առանցքը ժամանակակից անհատի հոգու ճշմարտության պատմությունն է, որն սկսվում է ծնունդով՝ «Ծնվել եմ», և անմիջապես շարունակվում վախճանով՝ «Մեռնել»: Մահը, ինչպես ծնունդը, ևս լուր է՝ ուղղված աշխարհին, և այդ մահն էլ կարող է երազելի լինել, եթե մեռնում են այնպես, ինչպես արնաքամվում է հերոսը, ինչպես քրքրվում է դրոշը, և եթե մեռնելուց հետո էլ մարդը կարող է իր իսկ անունով վերածնվել մանուկների տեսքով ու շարունակել կյանքը: Իսկ դրա համար անհրաժեշտ է ապրել: Հաջորդում է «Ապրել» բանաստեղծությունը: Հարկավոր է այնպես ապրել, «Որ սուրբ հողը երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը, // Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը»:

Ապրելու շարունակությունը հզոր երգ ունենալու, աստվածային բանին հասու լինելու երազանքն է: Այս բաց, անկեղծ ինքնանվիրումի մեջ հանկարծ ընկնում է կասկածի որոմը, քնարական հերոսը զղջում է իր ասած-տվածի համար, որովհետև հավատարմության ու նվիրումի դիմաց տեսնում է սոսկ անհավատարմություն: Հավատարմության կողոպուտի այդ ահավոր դավից ազատագրվելու միակ ձևը դառնում է հրապարակային կյանքը, ամենաթանկ գաղտնիքներն անգամ բոլորին ու բոլորի ներկայությամբ ասելու անհրաժեշտությունը: Հոգու կողոպուտից զգուշանալով և վստահ ինքն իր ուժին՝ այդ մարդը համարձակորեն գովերգում է այն խարույկը, «որ բնավ չի մտահոգվում, թե իր մահն է իր իսկ բոցը», ասում, թե ինչ է ուզում և ինչ չի ուզում, ինչն է հաստատում և ինչը ժխտում, ինչն է ատում և ինչը չի հարգում, ինչ է երազում, ինչն է արդարացնում, ինչն է հերքում, ինչով է հպարտանում....

Տեղատվության ու մակընթացության համաչափ ալեբախություն կա «Մարդը ափի մեջ» շարքում. Սևակը և՛ սիրով ու հավատով մոտենում է մարդուն, և՛ կռվով ու վեճով հեռանում նրանից: Ամեն ինչ ունի միմիայն մեկ նպատակ. մարդուն տեսնել կյանքի մեջ, բայց և նրան տեսնել որպես զտված ոսկի՝ առանց ստի, քծնանքի: Մարդու արժեքի բարձրացումը, նրա գովաբանությունը դառնում են գերագույն նպատակ և հասնում այսպիսի զուգորդության. «Նաև հասկանանք, // Որ մեր իսկ արյան գնդիկը մանր // Այս երկիր կոչված գնդից ավելի մեծ է ու ծանր»:

«Մարդը ափի մեջ» շարքը, այո՛, հիմք է Սևակի ստեղծագործական հետագա զարգացման համար, ինչի արտահայտությունը «Եղիցի լույս» գիրքն է, որը բացվում է «Նորօրյա աղոթք»-ով: Ժամանակակից մարդը նոր մեղքերի դիմաց աղոթք է ուղղում Աստծուն: Քնարական հերոսն ինքն իր մեջ խտացնում է քաղաքակիրթ մարդու ամբողջ ոգորումների ուղին: Տարածաժամանակային մեծ ընդգրկման մեջ ամեն ինչ սկսվում է շատ ավանդական պատկեր-խորհրդանշանների հայտնաբերումով. երկնքում Աստվածն է, Աստծու տաճարում՝ ծնրադրած հավատացյալը, որը տանջվում է «Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի» իր հոգին ծվատող կասկածներից: Փրկության հույսի խորհրդանշանն ավանդական լույսի պատկերն է, որից ձգվող ճառագայթներն այսպիսի անուններ ունեն՝ մաքուր ու վսեմ, անկեղծ ու անսուտ:

«Եղիցի լույս» շարքը մի ամբողջ ծիսակատարություն է՝ աղոթքներով, ժամերգություններով, պատարագներով, ուր համատեղվում են ներկա օրն ու միջնադարը, ժամանակակից մարդն ու պատմականորեն ներկա մարդը: Միջնադարը «Նորօրյա աղոթք»-ի ու «Առավոտ լուսո»-ի մեջ հարություն է առնում Նարեկացու և Շնորհալու տաղասացությամբ, բայց և բերում ժամանակի խոր դրաման. մի կողմում անբասիր հոգու տեր անհատն է, մյուս կողմում՝ բյուրավոր ու բութ, բյուրատեսք ու սուտ հավատացյալը, որի մատաղն անգամ գողացված է, իսկ աղոթքը ոչ թե հոգու խոսք է, այլ անգիր, ինքնահոս, հաշվեկշռված բառերի շարան: Այսպիսիների արատները բացահայտելու և նրանց բժշկելու համար է, որ խոստովանահոր կերպարանք ընդունած բանաստեղծը նույն բանն է ասում. «Լույս, լույս զվարթ, լույս զվարթ ու գերազանցիկ»:

Անհատի հոգևոր մաքրագործման արարողությունը շարունակվում է «Ձայնիվ երկրորդ առ տեր կարդամ», «Լույսի աղբյուրը», «Վառեցեք լույսերը» գործերում, որոնցում հանուն կյանքի ու մարդու վերջնական մաքրագործման քնարական հերոսն իրեն հայտարարում է մեկ լուսավորության նախարար, մեկ՝ կատարածու, որի գործը հոգին մաքրագործող լույսը մարդկությանը հասցնելն է, որը հանուն դրա ճակատամարտ է մղում պատի հետ, խարույկ վառում սառույցի վրա և այլն:

«Եղիցի լույս» շարքին հաջորդում է «Դիմակներ» շարքը: Դիմակը գալիս է քողարկելու ժամանակակից մարդու ներքուստ մինչև վերջ բացված-մերկացած էությունը: Դիմակի տակ թաքնված մարդիկ կյանքի դրամատիզմի մեջ մտցնում են ֆարսը և ճշմարտության ձգված լարը թուլացնում խաղք-կատակների մեջ: Հզոր և ինքնիշխան ճշմարտությունն սկսվում է աղավաղվել, դիմակավորվել, ներքաշվել պարապ զվարճասերների խաղի մեջ, բայց սկսված խաղը դեռևս ավարտված չէ, իր խոսքն ունի ասելու դիմակահանդեսի գլխավորը, որն ինքը՝ բանաստեղծն է՝ «Աստծո քարտուղարը»: Առանց դիմակի ու մերկ նյարդերով՝ դիմակահանդեսի գլխավորը կանգնում է հանրության առաջ և դիմակահանդեսը համարում ավարտված: Այն պահին, երբ թվում է՝ ճշմարտության որոնումը պետք է վերածվի ծաղրուծանակի, սխրանքի պատրաստ ոգեշնչումով նա հրահանգում է իր շուրջը խմբված դիմակավորներին. «Լսո՞ւմ եք ինձ: // Բավակա՛ն է, // Հանեցե՛ք ձեր դիմակները....»: Խաղն ավարտվում է բանաստեղծի հրաժարական-հեռացումով իր շուրջ դիմակահանդես բացած բոլոր երեսպաշտներից, որոնք մորթում են «մարդկայնություն-մարդկությանը»:

«Իրերի բնությունը» եռամաս բանաստեղծության մեջ իրերը ևս խոսքի մեջ են քաշվում՝ որպես որոշակի իմաստ ունեցող դիմակ-խորհրդանշաններ: Դրանք ավելի զորավոր են, քան մարդը, քանի որ նա ակամա ենթարկվում է իշխանություն ունեցող իրերին, ինչպես, օրինակ, աթոռը, գլխարկը, համազգեստը, գահը, բարձը, որ դիրք ու պաշտոն են խորհրդանշում: Բանաստեղծությունն ուղղված է հանրային չարիք դարձած պաշտոնամոլության և օրենսգրքային տառակերության դեմ, այն ամենի դեմ, ինչը կրճատում է լույսի տարածությունը: Բանաստեղծի մարտահրավեր-բռնկումը վերստին հասնում է բարձր լարվածության, նրա փոթորկուն տարերքը կործանարար է: Շատ լավ իմանալով իր նախորդների ճակատագիրը, որոնց արդար խոսքի համար քառատել են ու խոշտանգել, նորօրյա բանաստեղծը ևս ուզում է նմանվել նրանց, դառնալ մարգարե: «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին ու ճշգրիտ սարքերին» բանաստեղծության մեջ մեքենաներին տրվող առաջադրանքներից վերջինը սա է. «Թե այդ ի՞նչ ձևով, // Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի // Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել // Եվ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ...»:

— Նորագույն շրջանի հայ գրականության մեջ Համո Սահյանը ևս մի նոր որակ նշանավորեց՝ Աստված—բնաշխարհ—մարդ եռամիասնության իր պոեզիայով: Ո՞րն է Սահյանի քարափների արվեստի նորույթը կամ առանձնահատկությունը:

— Հ. Սահյանը քրիստոնյա բանաստեղծ էր՝ քրիստոնեական խոնարհությամբ բնության, մարդու և շրջապատի հանդեպ: Աստված նա ասում էր մայր բնությանը, մարդու ստեղծած բարձրագույն արժեքին՝ հացին, չարատավորված մարդուն ու մարդկային խղճին: Նա որոնում էր իր հավատը և գտավ այն նախ և առաջ ինքն իր մեջ ու պահ տվեց անանց հավերժությանը, որ բնությունն է, նաև մարդը, բայց այնքանով, որքանով ձուլված է այդ բնությանը կամ նրա մասն է: Եթե փորձենք բնորոշել Հ. Սահյանի գրական-ստեղծագործական նկարագիրը, ապա պետք է օգտագործենք պանթեիզմ՝ համաստվածություն հասկացությունը (հունարեն՝ ամբողջը և Աստված): Համաստվածությունը միավորում է Աստծուն և աշխարհը, ըստ որի՝ նյութական աշխարհը, բանականությունը և Աստված նույնն են:

Անընդմեջ շարժվող, փոփոխվող բնությունն ու ժամանակը Սահյանի պոեզիայում հավիտենության շունչն ունեն իրենց մեջ: Միշտ գտնված մի նոր երանգ, մի նոր գիծ, մի նոր զուգորդություն գալիս են ավելանալու ստեղծածին և ամբողջացնելու բնաշխարհի ու հոգեաշխարհի միասնական պատկերը: «Իրիկնահաց» գրքի կապակցությամբ Սահյանն այսպիսի միտք է հայտնել. «Բնությունն առաջ ես ընկալում էի իմ միջոցով, հիմա ինձ ուզում եմ հասկանալ բնության միջոցով»: ➥ էջ 7

Աստվածաշնչի և հայ գրականության կապակցվածությունը

↩ էջ 4, 6

Սա ոչ թե դիրքերի պարզ տեղափոխություն է, այլ անձնավորումից ավելի հավերժական արժեքների անցնելու կողմնորոշում, ինչը նշանակում է մարդկային կյանքը տեսնել բնության մեծ կյանքի մեջ: «Քարափների երգը» բնության մարդկայնացման և մարդու բնականացման խնդիրն է, որն արվեստի մեջ երբեք չի ավարտվել»,— ասում էր բանաստեղծը:

Ի տարբերություն համաստվածության իմաստասիրության, որը բնությունը նույնացնում է Աստծուն և ձգտում իրեղեն և ոգեղեն գոյի միասնության, Սահյանի բնապաշտությունը հանգում է բնության մարդկայնացմանը: Միաժամանակ, մարդն ու բնությունը Սահյանի պոեզիայում իրենց գոյության ներդաշնակության փնտրտուքի մեջ անընդհատ ձգտում են կատարելության, ինչն աստվածորոնման ճանապարհն է: Որպեսզի Սահյան անհատի և բնության հաղորդակցման արարողությունը չանշքանա և չկորցնի իր երանգների հարստությունը, անհրաժեշտ է Սահյանի տողերի մեջ գտնել մարդու և բնության կապի գոնե երևացող մասի նախասկիզբը և մանրամասների ճշգրիտ դասավորությամբ շարժվել առաջ:

Սկիզբը մարդ-բնություն գոյության միասնությունն է, որ ոչ թե սոսկ կապվածություն է, այլ երկվորյակների ծննդաբանություն: Այստեղից էլ՝ բնության երևույթները որպես հոգևոր ապրումի համեմատության կամ զուգորդության հիմք տեսնելու զգացողությունը: «Ես ժայռի նման մռայլ եմ ու բիրտ». սա բնության հետ առնչվելու մի կողմն է, երբ բնությունը, ըստ իր ձևերի ու գոյության սկզբունքի, բնականացնում է մարդուն:

Բնության շնչավորումն ու մարդկայնացումը Սահյանի պոեզիայում սկսվում են նմանության, հարազատության գծերի նկատումից ու արձանագրումից: Ընդ որում՝ հայտնաբերվում են ոչ միայն արտաքին ընդհանրություններ, այլև «հոգևոր կյանքի» ու «բնավորության» օրինաչափություններ: «Քարափը» բանաստեղծության մեջ կան այսպիսի տողեր. «Ինչ որ հեռավոր նմանություն կա Խաչիպապ պապիս // Եվ այս հյուրընկալ քարափի միջև»: Սահյանի համար իդեալը մարդու և բնության ներթափանցումն է միմյանց մեջ, փոխադարձ հարստացումն ու փոխակերպումը մեկը մյուսով: Բնաշխարհում ապրող մարդը, որին դեռևս չի աղավաղել քաղաքակրթությունը, իր լեռնաշխարհի նման անդունդ, խոր հոգի ունի, սարերի նման վեհ սիրտ, սևահողի բարություն և բարոյական այնպիսի արժեքներ, որոնցից զուրկ է քաղաքակրթված մարդը:

Եթե անգամ մարդը մեծ ամբողջի մի մասն է, նա մահկանացու է, իսկ բնությունը՝ անմահ ու հավիտենական: Դիմելով քարափներին՝ Սահյանի քնարական հերոսը խոստովանում է, որ ինքը քարափների շուրթերի վրա «սարսուռ ու դող է», այսինքն՝ բնության հավիտենականության կողքին մարդու գոյությունն ակնթարթային է: Իր մեծ նախորդի՝ Հովհաննես Թումանյանի նման Սահյանը ևս համոզված է, որ մարդն անմահանում է բնությանը ձուլվելու միջոցով...

— Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝
Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ



Տինտորետտո, Խաչելություն, 1565 թ.

Սաղմոսները Համատես Ավետարաններում

↩ էջ 5

Հետաքրքրական է, որ սատանան օգտագործում է 11-րդ և 12-րդ համարները, սակայն չի արտահայտվում 13-րդ համարի վերաբերյալ, որտեղ նշվում է առյուծի ու օձի վրայով քայլելու և նրանց ճզմելու մասին, որը կանխատեսում է չարի պարտությունը:

Համատես Ավետարաններում հաջորդ դրվագը վերաբերում է Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքին և ժողովրդի փառաբանությանը. «Բերեցին էշն ու քուռակը, նրանց վրա գցեցին իրենց հագուստները: Ապա Հիսուսը նստեց դրանց վրա: Ժողովրդի միջից շատերն իրենց հագուստները փռում էին ճանապարհի վրա, ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում և փռում ճանապարհին: Առջևից ու հետևից գնացող բազմությունը աղաղակում էր և ասում. «Օրհնությո՛ւն Դավթի Որդուն (եբր. Սաղմ. 118.25), օրհնյա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով (Սաղմ. 117(118).26), օրհնությո՛ւն Բարձրյալին» (Մատթ. 21:7–9):

Վերոհիշյալ՝ գոհության, փառաբանության սաղմոսները հաճախ երգում էին պաշտամունքի ժամանակ, կատարում էին Զատկի տոնին՝ որպես Մեսիայի գալստյան օրհներգ: Կարելի է ենթադրել, որ ժողովուրդն արդեն իսկ ճանաչում էր Հիսուսին՝ որպես Մեսիայի: Բացականչված «օվսաննան» կամ եբրայերեն «հոշիանան» նշանակում է «ազատիր, օգնիր»:

Մյուս դրվագը կրկին նույն իրադարձությունների հետ է կապված, սակայն տվյալ հատվածում սաղմոսի մեջբերում կա միայն Մատթեոսի Ավետարանում: Այս անգամ Հիսուս տաճարում առևտուր անողներին վտարելուց հետո մտնում է այնտեղ, կատարում բժշկություններ՝ հերթական անգամ ցույց տալով Իր անսահման սերն ու բարությունը, Իր Ով լինելը: Սակայն այստեղ է, որ հնչեցին օրհնություններ մանուկների բերաններից, որոնք ամենալավ օրինակն էին Երկնքի արքայությանը ժառանգորդ դառնալու (Մատթ. 19:14): «Տաճարում կույրեր ու կաղեր մոտեցան Հիսուսին, և բժշկեց նրանց: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Հիսուսի կատարած հրաշքները և մանուկներին, որ տաճարում աղաղակում էին և ասում. «Օրհնությո՛ւն Դավթի Որդուն», բարկացան և ասացին նրան. «Լսո՞ւմ ես, թե ինչ են ասում դրանք»: Հիսուսն ասաց նրանց. «Այո՛, դուք չե՞ք կարդացել, թե՝ «Երեխաների ու ծծկերների բերանով օրհնությունը կատարեցիր» (Սաղմ. 8:3)» (Մատթ. 21:14–16): Քրիստոս այս սաղմոսը հիշատակում է՝ ի հակադրություն քահանայապետների և դպիրների զայրույթի:

Յակոպո Պալմա Կրտսեր, Հիսուսը բուժում է անդամալույծին, 1592 թ.

Այս փառաբանության սաղմոսը նկարագրում է Աստծո մեծությունը և մարդու դերը Նրա վեհ ծրագրերի մեջ: Խոնարհ երեխաների բերաններով օրհնություններն Աստված օգտագործում է հպարտ թշնամիներին հաղթելու համար: Հիսուսն այստեղ, օգտագործելով տվյալ սաղմոսի հատվածը, դպիրներին և մյուսներին ցույց է տալիս իրենց անօրինությունները և մանուկների արդարամտությունն ու պարզությունը Աստծու առաջ: Եվ կրկին հաստատվում է մեր Տիրոջ խոսքը մանուկների՝ Աստծուն ավելի մոտ գտնվելու մասին:

Հաջորդ կարևոր դրվագը նորից տաճարում է, այս անգամ՝ ուսուցանելիս: Մատթեոսի 21-րդ, Մարկոսի 12-րդ և Ղուկասի Ավետարանի 20-րդ գլխում առկա է չար մշակների առակը: Շատ մեկնիչներ, հիմնվելով հենց այս հատվածի վրա, կարծում են, որ Իսրայելի վերնախավը գիտեր, որ Հիսուսը հենց Քրիստոսն է՝ Մեսիան, Աստծո Որդին, սակայն նրանց մեջ իշխանության մոլուցքն ավելի մեծ էր, իսկ Քրիստոս «խանգարում էր» նրանց այդ իշխանությունը յուրացնելու գործում:

Այս առակում խաղողի այգին խորհրդանշում է Իսրայելին, իսկ այգեպանները կրոնական առաջնորդներն են: Ծառաները, որոնց ուղարկում է այգու տերը, մարգարեներն են, որոնք սպանվեցին այդ նույն առաջնորդների կողմից (հմմտ. Մատթ. 23:37, Ղուկ. 11:47, Ղուկ. 11:51): Վերջում Աստված ուղարկում է Իր Որդուն՝ Հիսուսին, բայց Նրան նույնպես սպանում են: Հիսուսը բացահայտում է Մեսիայի մերժումը քահանայապետների կողմից և հայտնում Իր մահվան մասին: Այսպիսով՝ մերժված քարը հենց Քրիստոսն է, որը նաև անկյունաքար է, որովհետև Նա դարձավ Նոր ուխտի հիմքը: Սրա մասին խոսում է Սուրբ Պետրոս առաքյալը ևս (Ա Պետ. 2:7):

Հաջորդ հատվածը, որ կվերլուծենք, ամենաառանցքային դրվագներից է. Ո՞ւմ Որդին է Քրիստոս: Այս անգամ զրույցը տեղի է ունենում Քրիստոսի և փարիսեցիների միջև. «Երբ փարիսեցիները հավաքվեցին, Հիսուսը նրանց հարցրեց և ասաց. «Ինչ եք կարծում Քրիստոսի մասին, Ո՞ւմ Որդին է»: Նրան պատասխանեցին՝ «Դավթի»: Հիսուսը նրանց ասաց. «Իսկ Դավիթը, առաջնորդվելով Հոգով, ինչպե՞ս է նրան Տեր կոչում և ասում. «Տերն իմ Տիրոջն ասաց. նստի՛ր իմ աջ կողմում, մինչև Քո թշնամիներին դնեմ իբրև ոտքերիդ պատվանդան» (Սաղմ. 109 (110).1): Արդ, եթե Դավիթը նրան Տեր է կոչում, Քրիստոսն ինչպե՞ս Նրա Որդին կլինի» (Մատթ. 22:41–45, հմմտ. Մարկ. 12:35–37, Ղուկ. 20:41–44):

Հրեական ընկալումների համաձայն՝ Մեսիան պետք է լիներ Դավթի սերնդից մեկը կամ, ինչպես ընդունված էր կոչել, նրա Որդին (Բ Թագ. 7:12–16): Սակայն Հիսուսն այս հարցն ավելի խորացնում է՝ մեջբերելով 109-րդ սաղմոսը, որտեղ Դավիթը Մեսիային կոչում է Տեր՝ մեկ անգամ օգտագործելով Յահվե, իսկ երկրորդ անգամ՝ Ադոնա անունները՝ առաջացնելով տրամաբանական հակասություն՝ ըստ փարիսեցիների. եթե Մեսիան ընդամենը Դավթի ծառան է, ապա ինչո՞ւ է Դավիթը նրան Տեր կոչում: Հայտնի է, որ հրեաները Մեսիային սպասում էին որևէ քաղաքական առաջնորդի տեսքով, և Նա պետք է լիներ Դավթի տնից, սակայն Քրիստոս այս դրվագում ցույց է տալիս, որ Մեսիան պարզապես Դավթի որդի չէ, նա ավելին է, և եթե նույնքան մարդ էր, որքան Դավիթը, ապա տրամաբանական չէր լինի նրան Տեր կոչելը:

Մյուս հատվածին կհանդիպենք Մատթեոսի 23-րդ և Ղուկասի 13-րդ գլուխներում, որտեղ խոսվում է Երուսաղեմի նկատմամբ Հիսուսի սիրո մասին, և օգտագործված է 117-րդ սաղմոսը, որի մասին արդեն խոսել ենք վերևում: Սակայն այս համատեքստում Հիսուս խոսում է ապագայի մասին՝ ակնարկելով երկրորդ գալուստը, և ցույց է տալիս, որ Իսրայելը միայն ապագայում կճանաչի Իրեն՝ որպես Մեսիայի:

Ավետարաններում ամենախնդրահարույց հատվածներից մեկը Հիսուսի մահվան դրվագն է: Ի տարբերություն Մատթեոսի և Մարկոսի՝ Ղուկասի Ավետարանում դեպքը հիշատակված է առանց Քրիստոսի ասած սաղմոսի. «Ցերեկվա վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը խավարը պատեց ամբողջ երկիրը: Իններորդ ժամի մոտ Հիսուսը բարձրաձայն գոչեց և ասաց. «Էլի՛, էլի՛, լամ՞մա սաբաքթանի», այսինքն՝ «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղմ. 21(22).1) (Մատթ. 27:45–46)» // «Վեցերորդ ժամին խավար պատեց ամբողջ երկիրը, մինչև իններորդ ժամը: Իններորդ ժամին Հիսուսը բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Էլի՛, էլի՛, լամ՞մա սաբաքթանի», որ թարգմանվում է «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ» (Սաղմ. 21(22).2)» (Մարկ. 15:33–34):

Սաղմոսն ամենավառն է արտահայտում փրկության վերաբերյալ աստվածային տնօրինությունը, և հենց այդ պատճառով Քրիստոս ասում է այս սաղմոսի առաջին բառերը՝ ցույց տալով, որ Իր չարչարանքները մարգարեացված էին դեռ դարեր առաջ: Առաջին հայացքից այն հուսալքության մեղքի արտահայտություն է, սակայն սաղմոսի զարգացումը մեզ տանում է այլ տեղ: Սաղմոսի 7-րդ համարը նույնպես կատարվեց, երբ մարդիկ «.... անցնում էին, հայհոյում էին նրան» (Մատթ. 27:39): 17-րդ տողը ևս տեղի ունեցավ, երբ Նրան գամում էին խաչին, և սա խաչելության մասին ուղիղ մարգարեություն է: 19-րդ համարը կատարելապես իրագործեցին հռոմեացի զինվորները, երբ «....Նրա հանդերձները բաժանեցին՝ վիճակ գցելով» (Մատթ. 27:35): Սակայն սաղմոսի երկրորդ կեսից սկսվում է հաղթական խոսքը: Նախ՝ սաղմոսասացը դիմում է Աստծուն՝ խնդրելով Նրանից օգնություն, այնուհետև սեփական փորձից ելնելով՝ դիմում է մարդկանց՝ Աստծուն օրհնաբանելու. «Քանզի Տերը չարհամարհեց, չանարգեց աղքատիս աղոթքը և ինձնից երես չդարձրեց, այլ երբ աղոթեցի, ինձ լսեց» (Սաղմ. 21:25): Քրիստոս ցույց տվեց Իր հաղթանակը՝ աղաղակելով «Էլի՛, էլի՛, լամ՞մա սաբաքթանի» սաղմոսը:

Ալբերտ ուրկ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գևորգյան հոգևոր ճեմարանի
Դ լսարանի սան

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ս. Հակոբ Մծբնեցի Հայրապետ, Ս. Մարուգե ճգնավոր և Ս. Մելիտոս եպիսկոպոս

Սուրբ նահատակների և սրբակենցաղ անձանց վարքն ու կենցաղավարությունը կենդանի վկայությունն են այն իրողության, որ քրիստոնեությունը հաղթանակի, քաջության ու սիրո կրոն է և ոչ միայն: Սուրբ մարտիրոսներն ու սրբակենցաղ անձինք մարդկանց համար եղել և հիմա էլ օրինակ են ճշմարիտ աստվածճանաչողության և դրանով իմաստավորված կյանքով ու վարքով ապրելու: Նրանց աներեր հավատի շնորհիվ է նաև, որ եկեղեցին պտղաբերեց և կանգուն է այսօր: Պատահական չէ, որ Ընդհանրական Եկեղեցին սրբերի համար սահմանել է տոներ և հիշատակության օրեր, որպեսզի յուրաքանչյուր տոնի ժամանակ մեր սրտում և հոգում հասունանա այն ընկալումը, որ սրբերը մեզ համար բարեխոս են առ երկնավոր Հայրը և օրինակ են իրական քրիստոնյայի: Մենք պարտավոր ենք հիշել նրանց կյանքն ու սխրանքները, ապրել նրանց նվիրված հիշատակության կամ տոնի խորհուրդը՝ աղոթելով առ Աստված, որ մեզ էլ արժանացնի ժառանգելու Երկնքի արքայությունը:

Սուրբ Հակոբ Մծբնեցի Հայրապետը

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնելի սրբերի դասին են կարգվել Ս. Հակոբ Մծբնեցի Հայրապետը, Ս. Մարուգե ճգնավորը և Ս. Մելիտոս եպիսկոպոսը: Հայոց Եկեղեցին վերոհիշյալ սրբերի հիշատակը տոնում է չորրորդ Հիսնակաց կիրակիին նախորդող շաբաթ օրը (մոտավորապես դեկտեմբերի 12—18-ն ընկած շաբաթ օրն է): Այս տարի մեր Եկեղեցին այն նշում է դեկտեմբերի 14-ին: Այժմ ծանոթանանք, թե ովքեր են այս սրբերը և ինչպիսի կենցաղավարությամբ են ապրել:

Հակոբ Մծբնեցի Հայրապետը սիրելի սուրբ է որքան ասորիների, նույնքան էլ հայերիս համար: Երանաշնորհ Հայրապետը ծնվել, մեծացել և գործել է Մծբին քաղաքում (գտնվում է Թուրքիայի հարավարևելյան սահմանին և այսօր հայտնի է Նուսեյբին անվամբ): Վարքագրական աղբյուրների համաձայն՝ Ս. Հակոբը պարթևական տոհմից էր և մեր առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի հորաքրոջ որդին: Երբ Անակ Պարթևի տոհմը բնաջնջվում է, դայակները մանուկ Սուրենին (Ս. Գրիգորի ծննդյան անունն է) և Հակոբին փախցնում են Կեսարիա, ուր նրանք դաստիարակվում են քրիստոնեական ոգով ու մտքով: Շատ չանցած՝ մանուկ Հակոբն իր քրոջ՝ Սակդենի հետ տեղափոխվում է Պարսկաստան և որոշ ժամանակ ապրում արքունիքում: Սակայն Հակոբը թողնում է այդ ճոխ կյանքը և Աստծո կանչին անսալով՝ ճգնողական ու աղոթական կյանք վարելու նպատակով առանձնանում անապատում: Հետո սուրբը գնում է Մծբին, հանդիպում և ծանոթանում Մարուգե ճգնավորի հետ, որը հռչակված էր իր սրբակենցաղությամբ ու հոգետեսությամբ: Ըստ վարքագրական աղբյուրների՝ երբ Մծբին քաղաքի՝ իր ժամանակակից եպիսկոպոսը մահացավ, քաղաքի երկու հակադիր հոսանքի կողմից երկու թեկնածու ներկայացվեց, սակայն Մարուգե ճգնավորի խորհրդով բոլորն էլ միաբանվեցին Ս. Հակոբի շուրջ և նրան անապատից բերել տալով՝ 320 թ. եպիսկոպոս ձեռնադրեցին: Պատմում են, որ երբ սուրբ Հակոբը գալիս է Ս. Մարուգեի մոտ, վերջինս մարգարեանալով ասում է. «Այսօր համբուրում եմ քեզ՝ որպես միայնակյացի, իսկ վաղը կհամբուրեմ՝ որպես քո հոտի առաջնորդի և հովվի»: Իսկ Ս. Հակոբն ասում է. «Սպասի՛ր, եղբա՛յր, արժանի չեմ քո ասածին»: Արդյունքում սրբին եպիսկոպոս ձեռնադրեցին, մեծ ուրախություն եղավ քաղաքում, և օրհնություն ու փառք էին տալիս Աստծուն:

Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի կյանքը լեցուն է եղել գեղեցիկ պատմություններով և հրաշքներով: Ամենահայտնին թերևս Նոյան տապանին առնչվող հրաշքն է:

Հակոբ Մծբնեցին պատմությանը հայտնի թերևս առաջին մարդն է, որ փորձել է բարձրանալ Արարատ լեռը՝ Նոյան տապանը տեսնելու համար: Ս. Հայրապետը մի քանի ուղեկցի հետ բարձրանում է լեռը, վերելքի դժվարին ճանապարհին ուղեկիցները ծարավում են, և Հակոբի աղոթքի զորությամբ մի աղբյուր է բխում: Երբ ծանր վերելքից հոգնած քնում են, Հակոբին հայտնվում է Տիրոջ հրեշտակը և հայտնում, որ Աստված լսել է նրա աղոթքը, և այլևս կարիք չկա վեր բարձրանալու, քանի որ ինքը՝ հրեշտակը, Աստծու կամքով տապանի փայտից մի մաս է բերել նրան: Արթնանալով Հակոբն իր գլխատակին տեսնում է տապանի փայտի կտորը, որը կարծես կացնով ճեղքված-հատված էր ինչ-որ մեծ փայտից, և գոհություն հայտնելով Տիրոջը՝ վերադառնում են: Հենց այդ տեղում՝ Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մասյացոտն գավառում՝ Մեծ Մասիս լեռան հյուսիսային լանջին, երկու Մասիսների միջնամասում, շուրջ 2660 մ բարձրության վրա, Ակոռի գյուղի մոտ, Դ դարում հիմնվել է Ակոռիի Ս. Հակոբ վանքը, որտեղ պահվել են Նոյան տապանի մասունքը և Հայրապետի մատի ոսկորը: Տաճարն ավերվել է 1840 թ. երկրաշարժից: Հայրապետի մատի ոսկորն ամփոփվել է Աջում և Նոյան տապանի մասունքի հետ միասին ներկայումս հանգրվանում է Սուրբ Էջմիածնում:

Հակոբ Մծբնան Նիկիայի տիեզերաժողովին մասնակցած 318 հայրապետներից է և ըստ ավանդության՝ մեծ հարգանք էր վայելում Կոստանդիանոս Մեծ կայսեր ու ժողովականների կողմից՝ նախանձախնդրությամբ պաշտպանելով Քրիստոնեական եկեղեցու ուղղափառությունը Արիոսի և արիոսականների մոլար դավանությունից: Անգամ պահպանվել է մի ավանդություն, համաձայն որի՝ Արիոսն իր չարաչար մահը կնքել է Հակոբ Մծբնեցու անեծքով:

Սուրբ Հայրապետի կատարած հրաշագործություններից է պատանի երիտասարդի հարության հրաշքը: Սրբին նվիրված շարականում նույնպես կա հիշատակություն այս մասին: Ահավասիկ մի հատված. «Քո սուրբ արցունքների բխմամբ կենդանացնում էիր մեռյալներին՝ Ղազարոսին կենդանացնողի՝ Փրկիչ Հիսուսի նմանությամբ»:

Իրապես, ավանդության համաձայն, պատանին հիվանդությունից մահացել էր, և Ս. Հակոբին են խնդրում, որ բժշկի մահացած պատանուն: Սուրբն աղոթում է առ Աստված և խնդրում հետևյալը. «Տե՛ր Հիսուս, բարի բժիշկ և մեր հիվանդացած բնության ողջացնող: Դու, որ մեզ՝ մահվան մահիճն ընկածներիս, կանգնեցրիր գահավիժումից և խոստացար տալ անվախճան կյանք, Դու, որ ձայն արձակեցիր Ղազարի գերեզմանի մոտ և մահվանը հրամայեցիր վերադարձնել մեռյալներից չորս օրվա մեռածին և կենդանացրիր նրան: Այո՛, Տե՛ր, այսօր լսի՛ր Քո նվաստ ծառայի պաղատանքները և կենդանություն բեր այս պատանուն, և այն, ինչ արեցիր Եղիսեի և Եղիայի միջոցով, այսօր շնորհի՛ր և մեզ, ոչ թե մեր արժանիքների համար, այլ Քո սուրբ անվան, որ փառավորվի, և Եկեղեցին Քո բարձրարարվի, և Քո սուրբ Խաչը քարոզությամբ պայծառանա բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ, որպեսզի բոլորը, որ մոլորվել ու սխալվել են, իմանան, որ Դու ես ճշմարիտ Աստվածը, որ սպանում և ապրեցնում ես, իջեցնում ես դժոխք և հանում այնտեղից: Ապրեցրո՛ւ այսօր այս պատանուն և կեցություն տո՛ւր, Տե՛ր Աստված, լսի՛ր Քո ծառայի պաղատանքները»:

Երբ սուրբն ավարտում է աղոթքը, արցունքները հոսում են նրա աչքերից և թրջում սուրբ սեղանի գետինը: Սուրբը վերցնում է կավը, որ արցունքով թրջված հողն էր, դնում պատանու պարանոցին, և մանուկը շարժում է կրծքին դրած ձեռքը: Սուրբ Հակոբը, պինդ բռնելով տղայի ձեռքից, ասում է. «Հովհաննե՛ս, որդյա՛կ, ե՛կ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով ոտքի ե՛լ»: Նույն պահին տղան աչքերը բացում և տեսնում է սրբին ու հավաքված ժողովրդին:

Ս. Հակոբ Մծբնեցի Հայրապետի տոնը ուրախարար մի առիթ է ամենքիս համար՝ իբրև քրիստոնյա վերստին ոգեշնչվելու և ապրելու հոգևոր արթնություն ու խնդություն:

Պատմական Հայաստանի տարածքում եղել են սրբի անվամբ վանքեր ու բնակավայրեր: Այսօր սրբի անունն են կրում Մրգավանի, Գյումրու եկեղեցիները՝ կառուցված 1902—1905 և 2002 թթ., Արցախում՝ Գանձասար վանքից ոչ հեռու, Քոլատակ գյուղի մոտ, Շուշի տանող ճանապարհի աջ կողմում գտնվող վանքը (Թ դար): Սուրբ Հակոբ Մծբնա անունով եկեղեցի-մատուռ կա նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի բակում, որտեղ ամեն օր կատարվում է ժամերգություն, և ճեմարանականներն իրենց աղոթքն են բարձրացնում առ Աստված:

Սուրբ Հակոբն առանձնահատուկ տեղ է զբաղեցրել մեր Եկեղեցու տոնացույցում և ժամակարգության մեջ: Առավոտյան ժամերգությանը, երբ մարտիրոսաց տոն է, «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի մեջ, ի թիվս այլ սրբերի, հիշատակվում է նաև Մծբնա Հայրապետը, ինչպես նաև՝ Մարուգե ճգնավորն ու Մելիտոս եպիսկոպոսը: Հոգեթով երգակցությամբ և ոսկեշող տողերով է զարդարված նաև սրբին նվիրված շարականը: Ահա մի հատված. «Բանավոր հոտի հոգևոր հովիվ, տիեզերքի լուսավորիչ, լույսի սյուն՝ եկեղեցու մեջ կանգնած. քեզ՝ տոնողներիս համար բարեխոսիր Քրիստոսին:

Եկեղեցու գլխին զորավոր հավատքի պսակ, տիեզերքի պայծառ քարոզ և մարդկային ցեղի պարծանք. քեզ՝ տոնողներիս համար բարեխոսիր Քրիստոսին:

Քո սրբության տաճարում, երկրպագում ենք քո նշխարներին, փառավորում ենք քո հանգստյան հիշատակության օրը. քեզ՝ տոնողներիս համար բարեխոսիր Քրիստոսին» (Մանկունք շարական, ԳՁ):

Սուրբ Մարուգե ճգնավոր

Հայ Եկեղեցում Սուրբ Մարուգե ճգնավորի հիշատակությունն անբաժան է Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետից, ինչը, արդարև, հաստատում է «Սրբերի լիակատար վարքը և վկայաբանություն»-ը՝ նրանց հետ միաբանելով նաև Մելես կամ Մելիտոս եպիսկոպոսին: Այս երեք սրբերն իրար հետ ունեցած հարազատության պատճառով միասին են տոնվում, և այս իսկ պատճառով Մարուգեի և Մելիտոսի վարքը Հակոբ Մեծի վարքի հետ է ներկայացվում:

Առաջին ընդհանրությունն այն է, որ Մարուգեն խորհրդատուն և ուսուցիչն է Ս. Հակոբի, որն իր երիտասարդության տարիներին առանձին ճգնելուց հետո գալիս է այն վանքը, որի վանահայրն էր Մարուգեն: Միասնաբար կատարած տարբեր հրաշքներ են վերագրվում երկուսին: Օրինակ՝ Մարուգեն, մի տասնհինգ տարվա անդամալույծի տեսնելով, ասում է Հակոբին. «Արի այս մարդու բժշկության համար աղոթենք»: Աղոթելուց հետո մեկը՝ աջ թևից, մյուսը՝ ձախ թևից բոլորովին բժշկված վեր են բարձրացնում անդամալույծին: Երկուսը միասին բժշկում են նաև Մծբին քաղաքի կառավարչի եղբոր որդուն, որը երկու ոտքերն իրար սերտաճած էր ծնվել:

Մելիտոս կամ Մելես եպիսկոպոս

Մեր տոնացույցում երկու Մելիտոս ունենք, մեկն Անտիոքի հայրապետն է, մյուսը հիշատակվում է Հակոբ Մծբինի Հայրապետի հետ: Հայոց հայսմավուրքներում Մելիտոս անունով որևէ սրբի հիշատակություն չկա: Միայն կա Մելի կամ Մելես մի եպիսկոպոսի հիշատակություն՝ նոյեմբերի 22-ին: Վերոհիշյալ վերջին Մելիտոսին պիտի նույնացնենք, թերևս, հայսմավուրքի Մելեսի հետ:

Համաձայն հայսմավուրքի տվյալների՝ Մելեսն ազգությամբ պարսիկ էր: Նախապես պարսկական բանակում քրիստոնյա զինվորական էր: Հրաժարվելով զինվորական կյանքից՝ նվիրվել է հոգևոր կյանքին: Ապա Բիթրազան քաղաքի եպիսկոպոս է ձեռնադրվել: Սակայն նշվում է, որ քաղաքն առավելապես արևապաշտներով էր բնակեցված, ուստի նրանք այդ քաղաքից հալածեցին նրան: Այս դեպքերի հետևանքով մի երկար ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Երուսաղեմ և Ալեքսանդրիա, որտեղ հանդիպեց Անտոն Մեծին: Վերջինս խորհուրդ տվեց նրան վերադառնալ Պարսկաստան և այնտեղ շարունակել իր քարոզչությունը: Վերադարձի ճանապարհին հանդիպեց Հակոբ Մծբնեցուն: Ապա իր ավետարանչական գործունեությունը տարածեց մինչև Տիզբոն՝ այն օրերի Պարսից մայրաքաղաքը: Պատմվում է, որ սուրբը բազում բժշկություններ էր կատարում և իր քարոզչության շնորհիվ հեթանոսներից շատերին քրիստոնեության բերեց: Տեղի իշխանությունները նրան բանտարկեցին և ստիպեցին, որ արեգակին զոհ մատուցի: Երանելին այս հիմար առաջարկի համար նրանց խիստ կշտամբեց, որից զայրանալով՝ իշխանն իր իսկ սրով սպանեց նրան: Սուրբն արյամբ և ճգնավոր ժուժկալությամբ նահատակվեց և փառավորվեց, որովհետև այս աշխարհում և հանդերձյալ կյանքում Իրեն փառավորողներին փառավորում է Աստված, Որ միշտ երկրպագված ու փառավորված է, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ **krishayas.wordpress.com** **etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**
Ստոր. տպագր. 14.04.2025 թ.
Տպաքանակը՝ 1265